

այնպիսի նիւթեր միայն, որոնք կրնային անապական պահուիլ. եւ ամենէն յառաջ երկրի բերքերը՝ տոնմակաւք կոչուած (Եզն. 103. Ղկ. ԺԲ, 16. եւն): Ասոնց մէջ ընդարձակագոյն տեղը կը գրաւէին արմտիք (Ծննդ. ԽԱ. 34, եւն) կամ ունդք (Մանդ. 36. Դան. Ա, 12) կամ դեղահոռնդք (Ոսկ. Թղթ. Ա, 127, 815) կամ սերմակիք (Ա. կոր. ԺԵ, 37. Ազթ. 482) եւ սերմակք (Ա. Թագ. Ը, 15): Այրարատ, «ամենաբոյսն» (Փրպ. 22), «արգաւանդ եւ բարի», եւ շարայեան որկորներու բաւական (Խոր. 27), կը զեղուր Հայուն «զանպակասութիւն հացի» (Փրպ. 23): Պատմիչներէս եօթ դար յառաջ արդէն կը տեսնէր ու կը նկարագրէր Քսենոփոն Հայոց փարթամութիւնը. «Անդ կը գտնուին, կ'ըսէ, ամէն տեսակ պատուական պարեններ, անասունք, ցորեն... եւ ամենազան սերմանիք» (Քսեն. Բ, 90): Հարկաւ Հայաստանի բոլոր գաւառներն ամէն տեսակ տնկագործութեանց յարմար չէին կարող լինել. անոցմէ շատերն իրենց սեպհական բերքերն ունին Խորենացւոյն Աշխարհագրութեան մէջ: Աստի կը հետեւի՝ որ ամէն ճոխ Հայու շտեմարանաց մէջ ամէն տեսակ պաշարներ համախմբուած չպիտի գտնուէին: Բայց կրնանք վստահարար